



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 13 » հունիսի 2022թ. 87-Ձ

ք. Երևան

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԻ (WMI)
ԿՈԴԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԻՍՕ 3779-2009 և ԻՍՕ 3780-2009 միջազգային ստանդարտներով սահմանված ընթացակարգերը և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության Ստանդարտացման և չափման միջոցների տեսակի հաստատման բաժնի պետ՝ Թերեզա Բաբայանի N677 առ 13.06.2022թ. զեկուցագիրը և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից տրամադրվող և հաշվառվող (WMI) կողի համար հետևյալ սակագները՝
 - տարեկան 500-ից պակաս մեքենա արտադրող կազմակերպությունների համար - 250 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ),
 - ավտոմոբիլային ինժեներների կազմակերպության (Society of Automotive Engineers (SAE) կողմից նախապես շնորհված (WMI) կողը հաշվառելու համար - 50 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ):
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ